

# Մայրենի

## Դաս-միջոցառում ` նվիրված Ժ հնչյուն-տառին

Թեման` Ժ հնչյուն-տառի ամրապնդում:

Ժամաքանակ` 1 դասաժամ :

Նպատակը կամ ուսումնառության ակնկալվող արդյունքները.

ա/ Գիտելիքներ

- բառի մեջ բոլոր տառերը տեսնելու, դրանք իրենց համապատասխան հնչյուններին վերածելու և վանկերի ու ամբողջական բառի մեջ միավորելու կարողությունների ձևավորում
- նոր բառեր և իմաստներ` ժամ, ժամանակ, ժամացույց, ժպիտ:

բ/ Կարողություններ և հմտություններ.

Նախադասությունները միմյանց հետ կապակցելու և իմաստն ընկալելու

կարողությունների ձևավորում

Աշակերտը պետք է կարողանա`

- հասկանալով պատմել թեմատիկ նկարը
- հասկանալով ընթերցել բնագիրը:

գ/ Արժեքային համակարգ

Աշակերտը պետք է`

- կարևորի ժամանակի դերը մարդու կյանքում
- կարևորի ժպիտի դերը մարդկային հարաբերություններում:

## Դասի ընթացքը.



### Խթանման փուլ.

Դասը սկսվեց ուղերձով.

Հանելուկներ և փոփոխությունները բնության մեջ:

### Իմաստի ընկալման փուլ.

- Դիդակտիկ նյութերի օգնությամբ պատմեցին նկարը, կարդացին բառաշարքերն ու բնագիրը
- Բառային աշխատանք, հոմանիշ, հականիշ, բարդ բառերի կազմությունը, բառակապակցություններ և նախադասություններ:

Բնագրային աշխատանք.

- տեքստային աշխատանք



**Կշռադատման փուլ.**

Աշակերտները պետք է՝

- ներկայացնեն Հայաստանը իրենց պատկերացմամբ
- գուշակեն հանելուկները: